ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Աշոտ Մանուկյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարար

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Մոլդովայի Հանրապետություն (Քիշնև), 2017թ. հուլիսի 10-11-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Մոլդովայի Հանրապետության կառավարություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Եվրոպական Միության Արևելյան Գործընկերության մասնակից երկրների էներգետիկայի նախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

- Էներգաարդյունավետության բարեփոխման օրակարգի խթանման գործում, հիմնական մարտահրավերները, որոնց առջև կանգնած են ԵՄ ԱԳ երկրները,
- Էներգաարդյունավետության առկա ծրագրերը բարելավելու վերաբերյալ առաջարկությունները և լավագույն փորձը,
- էներգաարդյունավետության ոլորտում ազգային կամ տարածաշրջանային մակարդակներում աշխատանքների համակարգման ավելի լավ մեխանիզմների մշակման հարցերը,
- Ներդրողների համար էներգաարդյունավետության դաշտն ավելի գրավիչ դարձնելու նպատակով ձեռնարկվող քայլերը:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Միջոցառման շրջանակներում հանդիպումներ են կայացել Եվրոպական հանձնաժողովի հարևանության քաղաքականության և ընդլայնման հարցերով հանձնակատար Յոհանես Հաննի, Եվրոպական հանձնաժողովի էներգետիկ տնօրինության ղեկավար Դոմինիք Ռիստորիի, Էներգետիկ համայնքի քարտուղարության տնօրեն Յանեզ Կոպաչի, ինչպես նաև Արևելյան գործընկեր երկրների պատվիրակությունների ղեկավարների հետ:

Ներկայացրել եմ էներգարդյունավետության և էներգախնայողության բնագավառներում Հայաստանի ձեռբերումներն ու նախատեսվող քայլերը: Էներգետիկ համայնքի քարտուղարության տնօրեն Յանեզ Կոպաչն, անդրադառնալով Արևելյան Գործընկերության անդամ երկրներում էներգախնայողությունը խթանող օրենսդրությունների մշակման և ներդրման գործընթացին, առանձնապես ընդգծել է Հայաստանի օրենսդրական դաշտի առավելությունները՝ նկատելով, որ Հայաստանն այս ասպարեզում առաջ է անցել անգամ Եվրամիության անդամ մի շարք երկրներից:

Եվրոպական հանձնաժողովի բարձր ներկայացուցիչների կողմից նշվեց, որ էներգաարդյունավետությունը ԵՄ էներգետիկայի բնագավառում կարևոր ուղղություններից մեկն է և պատրաստակամություն հայտնվեց աջակցություն ցուցաբերել նաև Արևելյան գործընկեր երկրներում ծրագրերի իրականացման ընթացքում:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Պայմանավորվածություն ձեռք բերվեց էներգախնայողության և էներգաարդյունավետության բնագավառներում նոր ծրագերի մշակման, դրանց ներդրման խթանման նպատակով:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել աշխատանքները ԵՄ Արևելյան գործընկերության շրջանակներում:

13.07.2017թ.